

Ա Բ Ա Ր Ց Ե Ա Խ Ե Խ Ե Խ Գ Ր Ե Ր Ե Լ Ե Զ Ո Ւ Ե Շ

Հայստուանում գտնուած թեեռագիր արձանագրութեանց թիւ-
վը արգէն մօտենումէ հարիւրին: Շուլգից յետոյ՝ եւրոպացինե-
րի և հայերի մտանուոր ջանքերով դրանց թիւը հետզէնուէ շա-
տացաւ: Բոլոր լուսաւորուած երկրներում այժմն նաև Ուստաս-
տանում գիտնականների լուրջ ուշագրութեանն են արժանացել
այս՝ համաշխարհային պատմութեան համար առաջնակարգ նշա-
նակութիւն ունեցող՝ արձանագրութիւնները: Արարատին ընթեր-
ցողներին տալով՝ Հ. Եղիշէ աբեղայի թարգմանութեամբ՝ Պ. Նի-
կոլսկու յօդուածը Ուստահայաստանում գտնուած ուրարտեան և
թեեռագրերի մասին, ես մի քանի փոքր ծանօթութիւններ էի
աւելացրել որոնցից մէկի վրայ մտանաւորապէս այսօր հրաւի-
րելու եմ նօրից թեեռագրերի վերծանութեան խնդրով զբազուող
գիտնականների լուրջ ուշագրութիւնը²:

ինչպէս յացանի է ուրարտեան քեեռազրերի ոչ թէ ընթերցանութիւնն է զժուար, այլ վերծանութիւնը — ընագրի թարգ-

4) Յարմար և Ճշտագոյն եմ համարում՝ Ուրարտեան» բառի գործածութիւնը քան թէ «Ա. անեան», հայկական, արմենիաք, ալարոգեան, խալդեան և այլ անուանակոչութիւնները։ Սսորեստանական բևեռագրերի Ուրարտուն՝ մեր Այրարատը և Արարագը՝ (այս երկու բառերի ապրերը առումներով գործածութիւնը տես Խորենացու մէջ։ Արարագը ըստ Խորենացու վանից հարաւ է, Բուղանդը նոյն երկիրն անուանում է՝ Սարարագ։) աւելի ամփոփ գաղափար է տալիս մեզ՝ գոնէ տեղագրական տեսակետից, միանգամայն սահմանելով բոլոր այն նահանգները, որտեղ ցարդ գտնուել են այդ բևեռագրերը։

2) *Տեսայութեան և բարակաց ծանօթ.* Եր. 762—764.

մանութիւնը: Մինչեւ այսօր դեռ չէ յաջողուել գտնել թէ ի՞նչ լեզուով են գրուած այդ արձանագրութիւնները, կամ գոնէ թէ այդ լեզուն ինչ ընտանիքի է պատկանում: կամ՝ ո՞ր ծանօթ լեզուներին ցեղակից է: Ենթադրութիւնները շատ են, իսկ դրական ոչինչ է յայտնի: Հայերէնով վերծանելու փորձերը բոլորս պին անյաջող անցան, ոչ ոք այդ մասին այլ ևո չէ էլ մտածում: Ահմական լեզուներով վերծանելու փորձերը նոյն անյաջողութիւնն ունեցան: Վերջին ժամանակս կարծումէին վրացերէնի նմանութիւններ գտնել: Այս կետի վրայ է կանգ տանում և Պ. Նիկոլսկին: բայց ոչ մի հմտութեանց մէջ միշտ օրս՝ մի որեւ է դրական նմանութիւն չէ գտել վրացերէնի և ուրարտեան բևեռագրերի լեզուին մէջ: Եղած նմանութիւնները բոլորը արտաքին և պատահական են: Աւելի նորագոյն են ուսուցապետ Վեմանի և գոկառը Յելքի փորձերը:

Յայտնի տոսրեսատանագէտ Վեմանը հիմնուելով այն բանի վրայ որ ուրարտեան արձանագրութեանց մէջ միշտ յիշումէ իրեւ գլխաւոր աստուած Խալդի՞ն՝ հետեւնումէ, որ Խալդի աստուծոյ ժողովուրդն էլ պիտի լինէին Խալդերը. ճիշտ այնպէս ինչպէս որ ասորեսատանցիք իրենց անունն առել են Ասուր ասործուց: Խալդերի կամ՝ Խալդիների բնակուած երկիրը յետին ժամանակներում պիտի լինէր հայ և յոյն գրողներին յայտնի Խալդիքը կամ՝ Խալդեաց աշխարհը Մեծ Հայքի հիւսիս-արևմոքում: Թէ ինչպէս Աւրարտու՞ի բնակիչները քաշուեցան կամ քշուեցան այդ հեռու հիւսիսում ընկած լեռնային երկիրը կարելի է այս կամ այն վարկածով բացատրել: Բայց սրանով էլ ուրարտեան արձանագրութեանց վերծանութեան գործը մի որ և է զգալի յառաջադիմութիւն չէ անում: Ծնդունելով անգամ որ Խալդիք աշխարհի անունը և արձանագրութեանց Խալդի աստուծոյ անունը իսկապէս կապ ունին միմեանց հետ և դրանց նմանութիւնը զուտ արտաքին կամ պատահական չէ, այսուամենայնիւ մեզ բոլորումին անձանօթ է մնում Խալդեաց աշխարհի բնակիչների լեզուն, որ գլխովին անհետացել է:

Աւտի աշխարհի և բևեռագրերի կափ-ունի անունների բար-

դատութիւնից ۱) ևս այն հետեւանդին էի եկել, որ ուտէարէնը, որ մինչեւ օրս էլ դեռ պահպանել է իւր գոյութիւնը՝ պէտք է ուսումնասիրել և տեսնել թէ չունի²⁾ արդեօք նու որեւ է կատ, որեւ է նմանութիւն ուրարտեան արձանագրութեանց լեզուին հետո Աւրարտու երկրում կամ չին Հայաստանում թէեւ լիշտումն շատ ցեղեր և զանազան անուններով ազգեր, բայց անհաւանական չէ որ այդ տարրեր տարրեր ազգութիւնները խսկապէս ցեղակից էին և խօսում էին նոյն լեզուի զանազան բարբառներով։ Աւտէարէնն էլ, եթէ միայն ուտէացինները բեկուագրերի կամիոնի երկրի նախկին բնակիչներն էին, պիտի լինի այդ բարբառներից մէկը, և մօտ ազգակից բեկուագիր արձանագրութեանց լեզուին։

Այս խսկ մտած ողութեամբ տառջնորդուած ես բոլորուին մի կողմ թողի հայերէնով բացատրելու նոր փորձեր անելու միարը, մահաւանդ որ նայն խոհ հայէական առնելունեւէ իւրայ հիմնած կարելի է ապացուցանել, որ մենք Հայաստան ենք եկել համեմատաբար ուշ և նաև ոյն, որ մեր նախնիքը գեռ երկար ժամանակ պահպաննել էին իրենց լիշտութեան մէջ նախահայերի, այն է Հայաստանի նախկին բնակիչների — բեկուագիր արձանագրութեանց գրողների — լիշտառակիր²⁾։

1) Տե՛ս նախընթաց ծանօթութիւնը։

2) Խորենացու մէջ շատ պարզ լիշտառակութիւն կայ նախահայերի մասին, և այն շատ անգամ։ Ակներև է, որ հայերը Եղեգ գարում Յ. Ք. գեռ չէին մոռացել իրենց առաջին արշաւանքները, և զրոյցների մէջ պատմում էին անցեալից։ Նախահայերի գիւցազն և քաջ թագաւոր Արամը մտաւ հայերի ազգային վեպի մէջ Հայելի և Տիգրանի մէջտեղում։ Երկու ազգերի՝ Հայերի և Նախահայերի աւանդութիւնները ձուլուեցան։ Չնայելով Խորենացու, կամ լաւ ևս նրա աղբիւրի, բոլոր ջանքին՝ ցոյց տալ՝ որ Հայաստանի առաջին բնակիչները հայերն են եղել, այսուամենայնիւ ժողովրդական զրոյցը տեղ տեղ կարողացել է սպրդել պատմութեան մէջ և վկայել նախահայերի գոյութեան մասին։ Աւստի և շատ հասկանալի է թէ Նրանք՝ նախահայերը՝ ինչո՞ւ համար սակաւ, ցըսւած, ցան և ցիր եղած են նկարագրուած և ինք նակամ հազարամասին առաջ իսկ նախահայերը կամ նախահայերին։

Այսպիսով ինձ անհրաժեշտ երեւեցաւ չբաւականանալ միայն ուրիշների ուշաղրութիւնը ուտէարէնի վրայ հրաւիրելով, այլ հարկ համարեցի նաև անձամք փորձել ուտէարէնի հետ ծանօթանալ և տեսնել իմ արդիութիւնը վարկածի հաւանականութեան չափը: Թէև ռուս և հայ հրատարակութեանց մէջ ինձ յայտնի էին մի քանի կիսատ և աննշան փորձեր ուտէարէն լեզուի նմուշների, բայց լաւագոյն համարեցի կենդանի բարբառին ծանօթանալ, մանաւանդ որ բարեբաղդաբար էջմիածնում վեհ: Կաթուղիկոսի գալստեան առթիւ կար մի ուտէացի, Պ. Ա. Սողոմոննեանց մի ուրիշն էլ ճեմարանում՝ Պ. Առաքել Մնացորդանեանց: Նետախուզութիւններս խրախուսիչ հետեւանքների հասցրին ինձ: Սակայն փրփր ինչ աւելի շատ նիւթ ժողովելու և բաղդառութեանց համար կարեւոր ատաղձը շատացնելու համար մտադիր էի ձեռքբերած եղակացութիւններս շատ աւելի ուշ հրատարակութեան յանձնել:

Հերի գոյութիւնը սք անչելի, տարօրինակ բան է թւում այն պատմագրին, որն անպատճառ ուզումէր Հայկին կապել աշտարակաշինութեան հետ և հայերին համարել ուղղակի Բաբելոնից եկած առաջին ժողովուրդը. Մի տեղ էլ նախահայերը անուանեում են «Հինքն Արամազնեայք»։ Դատ նախարարներ էլ համարում են այդ հներից կամ ուրիշներից սերուած, ինչպէս օրինակ Սլկունիները. Ահա Խորենացու այն հատուածները, որտեղ լիշտառակութիւն է ինում նախահայերի մասին,

Ա. Ժ. Եթե բնակէ ի լեռնոտին միում ի գաշտավայրին յորում
սակաւք ի մարդկանե յառաջադրյան ցըռուելոցն դա-
դարեալ բնակէին զորս հնազանդ իւրաքանչալ Հայկ՝ շինէ անդ
տուն բնակութեան կալուածոց և տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդւց
Արմենակայ. Ա. Ժ. արդարացուցանէ զանգիր Հին ասա-
ցեալ զըռոյցու:

— Ըինէ և զիւղ մի և անուանէ յիւր անուն Հայկաշէն. Յիշի և
աստանօր պատմութիւնս. (ի) Հարաւոյ կողմանէ
դաշտիս այսօրիկ առ երկայնանստիւ միով լեռ
բաժքը բնակեալ յառաջագոյն արք սակաւը՝ ինք
նակամ հնագել դիւցակիւններ Արդարացուցանէ
և այս զասցեալ զբուցակիւններ

Ա. Ժ. (Հայկ) աճապարհեալ հաւաքէ զորդիս իւր և զթոռունս, արբ

Բայց ինչպէս գրեթէ միշտ պատահումէ այս տեսակ գէպքերում իմ՝ ուտէարէնի և ուրարտեան լեզուների համեմատութիւնից ձեռք բերած դրական հետեւների լուրը մեծացրած չափերով սկսուեց նեղ ընտանեկան շրջանից տարածուել գուրս, մինչև իսկ անցեալ «Արարատամ» (թիւ թ - ֆ երես 85.) սպրիել էո Հ. Եղիշէի մի ծանօթութեան մէջ իբրև արդէն դրապէս ձեռք բերուած հաւաստիք⁴⁾: Ա.ս իսկ պատճառով հարկ համարեցի թիւրիմացութեանց տեղիք չտալու համար այժմէն ևեթ հրապարակ հանել իմ ձեռք բերած հետեւանքների գոնէ գլխաւոր կէտը:

Քաջս և աղեղնաւորս, թուով յոյժ նուազունս, և զայլ և որ լնդիւրով ձեռամբւ:

Ա. ԺԲ. Բայց սքանչելի իմն ասէ պատմագիրն, թէ ի յուլով տեղիս գտան բնակեալ ի մարդկանէ յերկրիս մերում ցան և ցիր սակաւք՝ յառաջ քան զգալուստ բնկին մերոյ նախնառոյն Հայկակայ:

Ա. Զ. Բայց առաւել յաճախագոյն հինքն Արամազնեայք ի նուազս բամբուն և յերգս ցցոց և պարուց զայսոսիկ ասեն յիշատակօք: Եւ այսոքիկ զրոյցք սուստ և կամ թէ արդարելեալք՝ մեզ չէ ինչ փոյթ:

Բ. Գ. Ի ժամանակին յայնմիկ թագաւորեցուցանէ (Արշակ) զեղայրիւր Վաղարշակ մերոյ աշխարհիս, զհիւսիսի և զարևմուստ տալով նմասհմանս: Սաւ որպէս յառաջնում մերում մատենին գրեցաք, այր քաջ և խոչեմ՝ ընդարձակեաց ի վերայ սահմանաց մերոց: և կարգս կենցաղականս, որչափ մարթէր, սահմանեաց աշխարհիս: և նախարարութիւնս, և նոցին նախարարութեանցն նահապետութիւնս հաստատեաց զարս պիտանիս (կամ՝ պատանիս), որ ի զաւակաց նախնոյն մեր(ոյ) Հայկայ և յայլոց:

Բ. Ը. Այլ մոռացաք և զդժնեայ Սլաքն անուանեալ այր, զոր ոչ կարեմ հաւաստեալ ասել ի Հայկայ և թէ յառաջանքունից քան աշխարհից քան զնա եղելոց յաշխարհին, զոր հինգրոյցքն պատանեալ լինել: բայց էր այր քաջ:

4) Այդ ծանօթութեան մէջ ասուածէ . . . որովհետեւ զեռ Աւտէացւոց լեզուն՝ որը աւելի նման է այն (բենագիր) արձան ագրութեանց լեզուին, ուսումնասիրուած չէ:

Ուրարտեան բևեռագրերով՝ զբաղուազներին քաջ յայտնի է, որ Գիյարի սրամիտ բաղդատութիւններից ի վեր (1880 թ.) ամենահաստատուն բանը որ մենք գիտենք այս բևեռագրերի վերծանութեան խնդրում՝ այդ բայերի կատարեալի ձևն է՝ ին վերջաւորութեամբ (եղակի առաջին դէմք): Օրինակները շատ և շատ են, ինչպէս՝ Կունաբէն, Ա-Ղամաբէն, Խասաբէն և լուսական Վերծանութեան ալս կէտում տուանց բացառութեան համաձայն են ինձ ծանօթ բոլոր բևեռագրագէտները: Ուստի և պարզ է որ այս կէտն էր լինելու իմ հետախուզութեանց առաջին գործը մանաւանդ որ բաւերից աւելի հաստատուն և տեւական են մի լեզուի մէջ քերականական ձևերը: Այսպէս օրինակ՝ Գրեցի, Խոսեցի, Հարբացի, Տորնեցի և լուսական Վերծանութեամբ առաջարկելի պահել են մեր լեզում առնուազն 1500 տարի: Ուրեմն նոյնը կարող էր պատահել և ուտէարէնում:

Առաջին նախագասութիւնը որ ես առաջարկեցի Պ. Առղոմնեանին թարգմանել՝ հետեւեալն էր. Այս տունը վկեցի:

Ուտէարէն. Մէ կուախ ոէրզուրի
այս տունը շինեցի:

Իմ վրաս շատ տարօրինակ տպաւորութիւն արաւ հենց այս առաջին ին Շուարած մնացի կարծելով որ Պ. Առղոմնեանցը գիտէ իմ հարցասիրութեան նպատակը և կատակ է անում: Բայց յարգելի պարոնը բևեռագրերի և նրանց լեզուի մասին և ոչ իսկ հեռաւոր գաղափար ունէր:

Երկրորդ նախագասութիւն. առի այս քաղաքը, քանդեցի:

Ուտէարէն Ա. Ճիսի մէ շահարտի, վասազուրի:

Ակներե էր որ այստեղ շահարտ վարսի փոխառեալ բառ է, մնացածը ուտէարէն:

Բաղմանիւն-օրէնակներ առաջնոցեցին, այս սուրէարէն լէղում է վերջում-ընկած է հարաբետուլի և այն ու միայն եղանի առաջնութէնիւն, այլ բարձր տէնիւննէն՝ նէ եղանի և նէ յագնակի նույնութէն (ներգործական բայերի): Թիւն ու դէմքը որոշւումեն բայի միջին վանկու՝ արմատի և վերջաւորութեան մէջ զրուած դերանունով:

Օ ր ի ն ա կ ն ե ր .

Շինել = սէր - ըէսուն

Հինեցի = սէր - զու - րի

Հինեցիր = սէր - ըու - րի

Հինեց = սէր - ըէ - րի

Հինեցինք = սէր - եամ - րի

Հինեցիք = սէր - նամ - րի

Հինեցին = սէր - ղում - րի

Դերանուններ.

Ես = զու

զու = ուն

Նա = շոնո (կամ) շէտին

մենք = եան

դուք = վան (= ֆրանս. gn), կամ էֆան

նորա = շոնոր

Բայ Մորթել = շամ - փէսուն (փէսուն = ըէսուն)

Մորթեցի = շամ - զու - փի (փի = րի)

Մորթեցիր = շամ - նու - փի

Մորթեց = շամ - նէ - փի

Մորթեցինք = շամ - եան - փի

Մորթեցիք = շամ - նան - փի

Մորթեցին = շամ - ղուն - փի

Այս և սրա նման բազմաթիւ օրինակներից երեսումէ թէ ինչպէս է կազմակերպում բայի կատարեալը Էէ վերջաւորութեամբ և գերանունների օգնութեամբ: Աէրզուքի խոնարհման մէջ՝ սեր - լու - րի է փոխանակ սեր - նու - րի ձեի, այլ և էէ փոխանակ նէ - ի:

Կամ փոխանակ էան' - ի

Կամ փոխանակ նուն ի:

Բեն և րէ գրերի մերձաւորութիւնը այդ փոփոխութիւնները շատ բաւարար կերպով արդարացնում են:

Ուրիշ օրինակներ.

Յամ—զու—բի=զրեցի
յամ—նու—բի=զրեցիք
յամ—նէ—բի=զրեց, և այլն:

—

Բադալ—դու—բի=փոխեցի
բադալ—լու—բի=փոխեցիք
բադալ—լէ—բի=փոխեց
բադալ—եան—բի=փոխեցինք
բադալ—նան—բի=փոխեցիք
բադալ—դուն—բի=փոխեցին

—

Ավրէսըի=oրչնեցի և այլն

ավրէնըի

ավրէնէրի

ավրէեանըի

ավրէնանըի

ավրէդունըի

ավրէբէսուն=oրչնել,

Խախասըի=կոտրեցի և այլն.

խախանըի

խախանէրի և այլն.

խախա=կոտրուած:

աշղուրի=գործեցի

աշնուրի

աշնէրի և այլն

աշ=գործ, աշրէսուն=գործել

Քէսուն (=անել), որ և որոշ տեղերում (սակաւաթիւ) Քէսուն՝
օժանդակ բայով կաղմուած բոլոր ներգործական բայերի կատա-
րեալը Է (կտոր է) վերջաւորութիւնն ունի:

Այսպէս ուրեմն՝ առ այժմն առանց տեղի հեռուն խօրամնուխ
մինելու՝ եզրակացնենք մեր այս յօդուածի գլխաւոր միաբլ:

Ուրարտեան աշխանագույն կատարեալի բի վերջապահութեանը դառնաց
է այժման սարկազման, մայն աւելի ընդարձակ լադով (կատարեալի բարբ
րի մասն և ըստ-ըստ քայլ): Ուրարտեանը մահ լեզուն է մեղ ծառաօն,
որը նմանութեան այսպիսէ մի բնույթ և դրական կեր առնե սուրար-
թեան աշխանագույն կերպին հետո: **

Կի մի քանի խօսք: Խմ ունեցած ուտէարէնի սրաշարը թէե
շտ աննշան բան, բայց այսուամենայնիւ տալիս է բաղդատու-
թեան համար բաւական նիթ: Ո.ո. այժմն գիտենք հետեւեալրւ նա-
խահոցերի մեծ, գլխաւոր աստուածը, որ անպայման լիշտակ-
տում է գրեթէ բոլոր արձանագրութեանց սկզբում, չէր կարող
որ և է հետք յը թողնել ուտէացիների մէջ, եթէ միայն որսնը

**) Ծ ա ն օ թ. Թէոք չէ մոռանալ, որ այժմեան ուտէարէնը մի ազգի
ամենափոքր մնացորդի՝ ընդամենը հազիւ մի քանի հարիւր տան՝ (Նիթ և
Վարդաշէնում) բարբառն է, և այն մեծ մասամբ խառն հայերէնի, թուր-
քերէնի և այլ լեզուների հետ Ռեբեմն և կարելի է երևակայել թէ՝
ենթադրելով հանդերձ որ հին ուտէարէնը էր ուրարտեան լեզուի բար-
բառներից մէկը՝ ի՞նչ դրութեան և վիճակի մէջ հասած պիտի լինի նա-
մեզ, ըստ բնական օրինաց աստիճանաբար փոխակերպուելով՝ այլ և այ-
լակերպուելով ուրիշ լեզուների ազգեցութեամբ և խառնուրդով: և մա-
նաւանդ՝ մեծ մասամբ մոռացուելով առ նուազն 2500 տարուայ ընթաց-
քում: Մեր այլանդակուած և օտարախառն հայ բարբառներից ամենա-
խեղճերն անգամ մի հեռաւոր և թոյլ գաղափար միայն կարող են տալ
մեզ այդ մասին: Ուտէարէն բառերի մեծ մասը արդէն անհետացած է:
Սակայն ինչ որ կայ և մնացել է մինչև սյսօր՝ դրանով էլ կարելի էր
փորձ փորձել թարգմանելու ուրարտեան բանուազբերի բնագրերը: Հար-
կաւ փոքր ինչ զօտ տալով երևակայութեան և վարկածների, ճիշտ այնպէս
ինչպէս այդ որուել է մինչև այժմ: Սակայն Մորդմանի գլխին եկածը մեզ
պէտք է խրատ լինի և ես՝ գոնէ առ այժմ՝ բաւականանում եմ այսչափով:

Ի վերջոյ՝ աւելորդ է ասելն անգամ թէ որչափ կարեոր եմ համա-
րում: մանաւանդ այսուհետեւ, ուտէարէնի աւելի մօտ և մանրազնին
ուսումնասիրութիւնը նոյն իսկ բուն տեղում՝ ուտէացիների մէջ, որով
թերեւս գլխովին յեղաշրջուի ուրարտեան արձանագրութեանց վերծանու-
թեան համար մինչև այժմ եղածի մեծ մասը: Եւ կարո՞ղ է պատահել
որ այս գիտնական առաջնակարգ խնդրի լուծմանը ուտէարէնը ծառայէ
այնպէս: ինչպէս խպաներէնը ծառայեց եղիպտարանութեան:

ինչպէս ես ենթազրում եմ՝ նախահայերի մնացորդն են: Գոհ-նովոնից և Հայ գասական գրողներից լիշտուած Խաղողիքը Խաղուաց աշխարհը՝ միայն այն պատճառով համարում է նախահայերի երկիրը բրոյինեան՝ ինչպէս վերեռում տեսանք՝ ենթազրուումէ մի ներքին կապ Խաղուածուածութեան անուան և Խալուիքի մէջ: Խողանակը պիտի նշանակէ Խաղուածուածութեան ժողովրդի՝ այն է Խալուների՝ երկիրը. ինչպէս որ Հայք նշանակում է Հայկ¹⁾ աստուածութեան ժողովրդի՝ Հայերի երկիրը: Ուշագրութեան արժանի է այս տեսակէտից այն, որ Ուտիքում Խաղունակը կամ Խալունակը էր կուռում գլխաւոր քաղաքը, որը Փրկչականի թուականի առաջին գարերում Արշակունի թագաւորների ձմերանոցն էր²⁾:

Այժմս էլ կայ Խաղուալ գիւղ, Նուխուց Հիւսիս-արևելք, որի բնակիչները արդէն մոռացել են ուտէարէնը և՝ եթէ չեմ սիսալ-ւում՝ խօսումեն թուրքերէն: Չունի արդեօք Խաղուալը կապ Խաղուածութեան հետ³⁾:

Նախահայերը մի մեծ և տարածուած ժողովուրդ էին: Մի ժամանակ նրանք կարողացան մաքառել և մրցել յաջողութեամբ տիեզերակալ Ասորեստանցիների հետ: Նրանք տարածուած էին Հայաստանի երեք լճերի՝ Վան, Առան և Ուրմիայի աւազան-ներում: Հիւսիսային սահմանը հասնում էր Կարին, արևմտեանը մինչև Եփրամ: Նոր արձանագրութիւններ երեւան գալով կարող են դեռ աւելի էլ բնդարձակուիլ այդ սահմանները: Այսպիսի

1) Հայկ անունը հանրածանօթ է: որիրեւ աստուածութեան անուն գործ է ածուած Սուրբ Գրքի մէջ Խորենացուց շատ առաջ:

2) Տես Ագաթանգ. Վենետ. 1835, եր. 37. . . . յանդիման եղանակաւորին Խոսրավու յՈւտի գաւառի, ի Խաղուալ քաղաքի, ի ձմերոց արքայութեանն Հայոց:

3) «Քալ» այժմեան ուտէարէնում նշանակումէ յ ե ծ: ք ա լ ք ա լ մ ե մ ե մ ե ծ: Խալ - զի կամ Խալ - զի - նի կարող էր նշանակել Մեծ-աստուած նախահայերի լեզուում, ինչպէս որ կայ նման վերջաւորութեամբ Արդինի աստուածութիւն: Նոյն բևեռազիր արձանագրութեանց մէջ, Այս գէպքում հասկանալի կլինէր, Խալ գործածութիւնը փոխանակ «Խաղուի»:

մի մեծ ժողովուրդ, որը իւր ժամանակուայ քաղաքակիրթ տղգերիցն էր, չէր կարող բոլորովին անհետ կորչել: Խաղաղիքը՝ աւելի ևս Ռւտեմեն լինել նրանց վերջին կայարանները:

Կոյ և մի երրորդ աշխարհ, որ՝ ինձ թւումէ թէ՝ պէտք է որոնել ուտէացիների հեռքեր (1): Այդ երկիրը ծովիաց աշխարհն է: Հին-Հայաստանի սահմանագլուխներից մէկը: Մարութայի վկայաբանութեան մէջ (2) Նվիրկերախ գաւառը կոչւումէ Ռատայեցւոց աշխարհ, ինչպէս որ Մարութան էլ թարգմանւումէ՝ մար—Ռատայ, այն է՝ տէր-Ռատայ: Այսուղի ուտայեցիք երեխ տարացած էին ճիշտ այնպէս՝ ինչպէս հիւսիսում—Ռւտէ աշխարհում—հաւացան: Հմուտն Ալիշան մեզ թւումէ թէ իրաւամին Տրդատի ժամանակ յիշուած Ռատայ, Ռատայ կամ Աւտայ նախարարի անունը նպանացնումէ այս աշխարհի անուտն հետ Մանաւանդ որ այդ Ռատայ նախարարը, ըստ վկայութեան Խորենացու, նախահայերից սերուած Ալկունիների ազգակից էր և կոտորածից խուսափող Ալկունիները փախան ապառուտնելու ծովիաց աշխարհէլ (3): Աւկայն հազիւ թէ Ռատայ նախարարը (Ռատայ անունը Խորենացին գործ է ածում իրեմ մարդու անուն) Ամառունի լինէր, ինչպէս պիգումէ պատմահայրը: Ագաթանգեղոսի մէջ Ռատայի Ամառունի լինելու մասին ոչինչ չկայ, իսկ Խորենացու աղբիւրը այս կէտում միմիայն Ագաթանգեղոսն է (4):

Այսպիսով ահա բացւումեն մեր առաջ խուզարկութեանց նոր աշխարհներ, շարաստանի ճիշտ հակադիր սահմանածայրերում աշխարհներ, շարաստանի ճիշտ հակադիր սահմանածայրերում նայց այս բոլորի մէջ այսուամենայնիւ գերակշռող մնումէ՝ Ռւրարտեան լեզուի ուսումնասիրութեան համար՝ Ռւտին, ուտէացիք, և մանաւանդ՝ ուտէարէնը:

(1) Դեռ չեմ խօսում մեր հին աշխարհագրական և նախարարութեանց բաղմաթիւ անունների ակներև նմանութեանց վրայ, որ ունին նրանք ուրարտական յատուկ անունների հետ:

(2) Վկայարանութիւնը, հատ. Բ. Վենես. 1874, եւ մեր ճառընափիրները:

(3) ՏԵ՛Ս Խորեն. Բ. չէ, ձր, ձգ. «Այրարատ» եր. 194.

(4) Ագաթ. Վեն. 1835. եր. 167—8, ՏԵ՛Ս և Հ. Սարգսեանի «Ագաթ» և իւր բազմ. գաղտնիքն, եր. 88, ձնթ. 2:

Վերջին նկատողութիւն։ Մարութայի վկայաբանութեան մէջ Նփրկերոր (Մարտիրոսաց քաղաք) Ծոփաց երկրումն է, մինչդեռ Փորենացու աշխարհագրութիւնը այդ քաղաքը դնում է սահմանակից Աղձնիքում։ Զոր գաւառ է լիշտում՝ Խորենացու մէջ Գուգարքի և Ուտէացիների սահմանումիշում (Ա. թ)։ Զոր անունով գաւառ կայ նաև Աղձնիքի—Ծոփաց սահմաններում։ Զգիտեմ այս Չորերի որի իշխանն է, որ Փաւառոս Բիւզանդից կոչւում է «Գորութիւնանն Զորոց աշխարհին»⁴⁾։ «Գորութը» աղջատ ընթերցուած է։ Փաւառոսի մի քանի մեծ հատուած, ների իմ նոր օրինակներում²⁾ փոխանակ Գորութիւնի կարգացւումէ։ Դուրսութ։ Դուրսութ կամ գուրուտ բառը այժմեան ուտէարէնում նշանակում է՝ սիւն, գերան⁵⁾։ Եթէ Փաւառոսի լիշտած Դուրսութը ոչ թէ հիւսիսային Հայաստանի Զորքից այլ Աղձնիքի Չորրից էր, ի՞չպէս որ ես կարծումեմ⁴⁾ այն ժամանակ այս անունը իւր ուտէարէն նշանակութեամբ մի նոր ապացուց կլինի Ուտէացիների և Ոտապեցիների ցեղակցութեան որ մեզ համար կարեւոր նորութիւն է ուրարտեան լեզուի ուսումնասիրութեան տեսակէտով։

ՄԻԱԲԱՆ.

1) Փաւառ. Բուղ. Գպր. Գ. ԴԼ. Ժբ, Գպր. ԳԼ. Ճ.

2) Երկու պատուական ճառընտիրներ մեր մատենագարանի, որոնց մէջ գտայ Փաւառոսից ամբողջ գլուխներ, ընտիր ընթերցուածներով որով ուղղումն շատ թերատ և աղջատ կտորներ։ Ի թիւս այլոց մի նոր և յաջող ընթերցուածով գրապէս ապացուցւումէ։ որ Փաւառոսը ոչ մի կապ չունի Սահառունի իշխանների հետ։ Այս մասին դալ անգամ։

3) Ուտէարէն «ուշ» նշանակումէ փայտ, գուրուտ կամ դուրսութ նշանակումէ գերան, սիւն։

4) Փաւառոսում՝ Դուրսութ Չորոց իշխանը գրուած է Կողբացւոց և Խորխոռունեաց իշխանների մէջտեղում։ Մի ուրիշ տեղ Փաւառոսն ասումէ, «զօրն և տունն տոհմին Աղձնեաց կողմանն ապստամբեցին յաբայէն Հայոց Արշակայ և չողան կացին առաջի աբբային պարսկաց Շապհոյ։ և պարիսպ ածէին ի Հայոց կուսէ՝ որ Չ որայն կոչեն, և զատուցին զիւրեանց աշխարհն ի Հայոց»։ Պ. Ճ.